

«Էմիմեան Ազգագրական ժողովածու», հատոր Ե., 1904 թ., դիմն է 1 ր. 50 կ.

Ներկայ հատորը պ. Ս. Հայկունու հաւաքած քրդական վէպերից է կազմուած: Խմբագրութիւնը յայտնում է որ «այս վէպերից մի քանիսը, ինչպէս երևում է համեմատութիւնից, վարիանտներ են՝ տարիներ առաջ յայտնի իրանագէտ Ա. Սոցինի խմբագրութեամբ Գիտութեանց ձեւարանում հրատարակուած՝ քրդական պատմութեան և պատմութեան համարում, Սոստամ, Յուսէփ և Զուլէյխա, Ջանքիլի Բայց մեր ժողովածուն՝ համեմատութեան առնելով գէթ այս ընդհանուր նիւթերը և մանաւանդ Ռոստամի մասին երկու պատմութեանը, թէ հարուստ է Սոցինի հրատարակածներից և թէ բաղմատեւսակ, թէպէտ և քրդական վիպական նիւթերը անցել են հայ ժողովրդական միջավայրերից»:

Խմբագրութիւնը քրդական երգերի եղանակների մասին մի որոշ դադափար տալու նպատակով ղեկողել է գրքում հ. Կամիտաս վարդապետի ձայնագրած միջանի երգեր:

Վէպերը գրի են առնուած Վասպուրականի հայ բարբառներից, Մոկաց, Արծկէի, Արծէշի, Վանայ կայն. տեղ-տեղ բերած են քրդական լեզուով կտորներ: Միջանի վէպեր թարգմանուած են հայերէն՝ նոր գրական լեզուով:

Այդ հատորի մէջ էլ—հում նիւթի մի ահագին պաշար, որից կարող են օգտուել և մեր ազգագրութեամբ հետաքրքրուողները, ինչպէս և էպիկ բանաստեղծները:

Na.

Երշ. Միլիթարեան՝ «Դէպի Պարսաս ուղեւորութիւնը»: Հանրամատչելի գրաւարան Զ. Առաքելեանի, № VII. Թիֆլիս, 1904 թ., դիմն է 40 կ.:

Վազել Եւրոպա, ուր ճամբորդելու ամեն տեսակ յարմարութիւնները և քաղաքակիրթ նիւտուկացը ղուարճալի են դարձնում ժամանցը, լաւ բան է իհարկէ, բայց վատ չէր լինի եթէ մեր քնքշացած ինտելիգենտները երբեմն պտտէին և մեր անքաղաքակիրթ հայրենիքում, աւելի մօտից, աւելի ճիշտ ճանաչելու համար մեր իրականութիւնը, մեր սարերը, ձորերն ու դաշտերը, որոնց մէջ ապրում է մեր ժողովուրդը չճանաչուած մնալով մեր պոռոտախօս իդէօլոգներից: Թութակի նման կըրկնել ուրիշների, թէկուզ մեծ մարդկանց մտքերը, իսկ չցանկանալ ճանաչել այն միջավայրը, պատմական պայմանների այն